ՀԻՍՈՒՍԸ ԵԿԱՎ ՈՐ ՓՈԽԱՐԻՆԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

Ինչի՞ համար եկավ Հիսուսը

Մաս 1

«Միայն ուտելիքի, ըմպելիքի ու պես-պես լվացումների վրա հիմնված պաշտամունքը մարմնական արարողություններով է, որոնք ժամանակավոր են և գործում են մինչև մարդու ուղղվելը:» Եբրայեցիս 9:10

Մեծահարուստ, երիտասարդ իշխանը

«Հիսուսը պատրաստվում էր ճանապարհ ընկնել, երբ մեկը վազելով մոտեցավ, ծնկի գալով՝ նրան հարցրեց. «Բարի՛ վարդապետ, <u>ի՞նչ պետք է անեմ</u>, որ հավիտենական կյանքը ժառանգեմ»: Հիսուսը նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ "բարի" անվանում. ոչ ոք բարի չէ, բացի միայն մեկից՝ Աստծուց: Պատվիրանները գիտես. "Մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր, ուրիշի ունեցածը մի՛ խլիր, քո հորն ու մորը պատվի՛ր"»: Իսկ նա պատասխանեց. «Վարդապե՛տ, այդ բոլորն իմ մանկությունից ի վեր պահել եմ»: Հիսուսը սիրալիր նայեց նրան ու ասաց. «Քեզ մի բան է պակասում: Եթե կամենում ես, գնա՛, ինչ որ ունես, վաճառի՛ր ու աղքատների՛ն բաժանիր և երկնքում գանձ կունենաս: Վերցրո՛ւ խաչը և արի՛ իմ հետևից»: Բայց նա, այդ խոսքից մռայլվելով, տրտմած գնաց, որովհետև մեծ ունեցվածքի տեր էր: Եվ Հիսուսը, շուրջը նայելով, իր աշակերտներին ասաց. «Որքա՜ն դժվար է հարստություն ունեցողների համար Աստծու արքայությունը մտնել:»* Մարկոս 10:17-23

Մեծահարուստ, երիտասարդ իշխանի հավատամքի երեք սխալները

Հավատամքի սխալ # 1: Ես ինչ որ ունեմ, բավական է Աստծո հետ ճիշտ փոխհարաբերություն ունենալու համար

- Նա հարուստ էր
- Նա երիտասարդ էր
- Նա իշխան էր
- Նա խոնարհ էր
- Նա հոգևորապես զգայուն էր
- Նա բարոյական անձնավորություն էր

Հավատամքի սխալ # 2: Եթե իմ ունեցածը բավարար չէ, ես կարող եմ ավելին անել երկնքին արժանանալու համար

«Մենք ամենքս դարձել ենք անմաքուր մեկի նման, մեր ամբողջ արդարությունը նման է դաշտանի շորի.» Եսայիա 64:6

«Որովհետև բոլորը մեղանչեցին ու զրկվեցին Աստծու փառքից:» Հռովմայեցիս 3:23

«Շնորհով եք փրկվել հավատի միջոցով, և սա ձեզանից չէ, այլ Աստծու պարգևն է: Ոչ էլ գործերից է, որպեսզի ոչ ոք չպարծենա: Քանզի նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված նախապես պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանցով ընթանանք:» Եփեսացիս 2:8-10

«Բայց հիմա Աստծու արդարությունը հայտնվել է օրենքից անկախ՝ օրենքի և մարգարեների կողմից վկայված լինելով, այսինքն՝ Աստծու արդարությունը, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով է բոլոր հավատացողների համար, որովհետև խտրություն չկա:» Հռովմայեցիս 3:21-22

Հավատամքի սխալ # 3: Ես կարող եմ Հիսուսին վստահել կյանքիս մի մասը միայն և դեռ կատարյալ ուղիղ լինել Աստծո հետ:

«Տիրոջ աչքերը դիտում են ամբողջ երկիրը, որ զորացնի նրանց, որոնց սիրտը ուղիղ է նրա հետ.» Բ Մնացորդաց 16:9

Ամեն ինչ հանգում է կամքերի պայքարին. «Ի՞նչ եմ ուզում ես» թե՞ «Ի՞նչ է ուզում Աստված»:

«Հիսուսը պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. չկա մեկը, որ ինձ համար կամ Ավետարանի համար թողնի տունը կամ եղբայրներին, կամ քույրերին, կամ հորը, կամ մորը, կամ կնոջը, կամ զավակներին, կամ արտերը.»* Մարկոս 10:29

Անձնական աղոթք:

Տեր, այսօր հանձնում եմ Քեզ_____ !

Հաջորդ Քարոզի Թեման:

ԴՈՒ ԿԱՐՈՂ Է ԶԱՐՄԱՆԱՍ

Հովիվ Սարո Խաչիկեան